ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2020թ. թիվ 369-Ա

ՄԱՐԻԱՄ ՍԱՐԳՍԻ ԷՏԻԲԱՐՅԱՆԻՆ
«ԴՍԵՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 23-ի թիվ 5 որոշումը, հաշվի առնելով Մ. Էտիբարյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մարիամ Սարգսի Էտիբարյանին նշանակել «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 2020 թվականի ապրիլի 28-ից:

2. Մ.Էտիբարյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. ապրիլի 27
ք.Վանաձոր